ՄԿՐՏԻՉ ԽՐԻՄՅԱՆ

(մահվան 90-ամյա տարելիցի առթիվ)

Է. Ա. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

1907 թ. հոկտեմբերի 29-ին Էջմիածնի վեհարանում իր մահկանացուն կնքեց հայոց ծերունազարդ հայրապետը՝ Մկրտիչ Խրիմյանը։ Նրա անունը դեռ կենդանության օրոք զարդարվեց սրբության լուսապսակով, 42-ամյա հոգևոր գործիչը տարոնահայության կողմից արժանացավ այնպիսի պատվանունի, որը նրան ուղեկցեց ողջ կյանքի ընթացքում՝ Հայրի՛կ... իսկապես, նա հայության հայրիկն էր, նրա ցավերին կարեկից, նրա տառապանքներին սպեղանի դնող։

Ծնվել է 1820-ին Վանում, Կըրըմցոնց կամ Խըրըմցոնց տարազագործ վաճառականի ընտանիքում։ Ուսման անհագուրդ տենչը նրան ուղղում է դեպի Լիմ և Կտուց անապատների վանական դպրոցները, որոնք չեն բավարարում նրա հոգեկան պահանջները։ 1842-ին նա հեռանում է այդտեղից և իր երեք ընկերների հետ շրջագայում Հայրենի Վասպուրականի բոլոր գավառներում, ծանոթանում տեղի հայության կացությանը։ Նրա մտահոգիզոնն առավել ընդլայնվում է Կ. Պոլսում, ուր, երկու տարի կոշկակարությամբ պահպանելով իր գոյությունը, մեծ հափշտակությամբ զբաղվում է ինքնակրթությամբ։ Վերադառնալով հայրենի Վան, անսում է մոր թախանձանքին և ամուսնանում։ Չանցած շատ ժամանակ, 1847-ին, խույս տալով զինվորական հարկից, թողնելով դեռատի կնոջն ու նորածին աղջկան, իր մտերիմ ընկերոջ՝ Ագրիպաս Դարաղյանի հետ անցնում է Պարսկաստան, ապա Ավարայրի դաշտով, Արաքսի ափերով մտնում Արևելյան Հայաստան՝ Այրարատ, Շիրակ։ Լինում է նաև արևելահայ մշակութային կենտրոն Թիֆլիսում, այնուհետև ծովով, Բաթումի վրայով վերադառնում Կ. Պոլիս։ Այնտեղից կատարում է իր երկրորդ ճանապարհորդությունը, այս անգամ՝ դեպի Երուսաղեմ, քրիստոնեական եկեղեցու սրբազան վայրերը։ Երկու տարի անց Ճանապարհորդությունների տպավորության ներքո նա երկնում է իր երկու հրավիրակները՝ «Հրավիրակ Արարատյան» և «Հրավիրակ երկրին Ավետյաց»։ Առաջինի մտասևեռ գաղափարը ջերմ հայրենասիրություն էր, երկրորդինը՝ քրիստոնեական սրբազան հավատը։ Սրա ընթերցումն առաջացնում է երիտասարդի՝ սուրբ գրքերի իմացության և մեկնության նկատմամբ զարմանքի զգացողություն, ապա համոզում, որ հետագայում՝ կնոջ ու աղջկա մահից հետո նա կատարեց ճիշտ ընտրություն՝ ընդունելով կուսակրոնություն և ձեռնադրվելով վարդապետ։ Նրա վարդապետական առաջին քարոզն ուներ ուշագրավ բնաբան՝ «Հովիւ քաջ զանձն իւր դնէ ի վերայ ոչխարաց իւր»։ Աստվածաբանական այդ քարոզը հայրենասիրության ներբող էր, կրթության, լուսավորության և դաստիարակության հոգեցունց մի կոչ։ Այդ բնաբանը եղավ նրա ողջ կյանքի խորհրդանիշը։

Աղթամարա միաբանությունը թույլ չտվեց նորընծա վարդապետին տեղում ի կատար ածել նվիրական իղձը՝ Աղթամարը դարձնել հայկական Վենետիկ։ Վարդապետ Խրիմյանը 1854 թ. հետո դարձյալ Կ. Պոլսում էր, ուր քարոզիչ է կարգվում Սկյուտարի Ս. Աստվածածին եկեղեցում։ Այստեղ նրա քարոզների բնաբանն է դառնում «Հուր եկի արկանել...»։ Իսկապես, նա իր կրակոտ խոսքերով վառում ու բորբոքում էր ունկնդիրների հոգին։ Նրան լսելու համար հավաքվում էր հոծ բազմություն։ Դրանց շարքում էին նաև թուրքական արքունիքի հայազգի բարձրաստիճան դեմքեր։ Անվախ Խրիմ-

յանը քարոզի ժամանակ համարձակությամբ դիմում էր արքունի վառոդապետ Հովհաննես բեյ Տատյանին, դտնելով, որ բավ է արքունիքին վտոող մատակարարել, անհրաժեշտ է նրա ամրարած վառոդից «քիչ մըն ալ Հայաստանի հայերուն տալ՝ նրա թշնամիների դեմ գործածելու նպատակով։ Ապա խոսքն ուղղվում է արքունի ճարտարապետին՝ Պալյան ամիրայական տոհմի շառավիղ Կարապետ Պալյանին. «Բավ է, որ սուլթանաց համար պալատներ շինես, եկուր, քեզ Հայաստան տանեմ, հոն մեր նախնյաց ավերակներ շատ կան, եկուր, նորոգե մեր փլած ե կիսավեր ամրոցներ, բերդեր ե պալատներ»[1]։ Այդ քարոզները հուզում են օսմանյան մայրաքաղաքի գաղթօջախի հայության սրտերը, նրանց «մարած հոգիները վառվում են հայրենասիրական կրակով»։ Սակայն Խրիմյանը քաջ գիտակցում էր, որ բանավոր խոսքը նման է առավոտյան ցողին, արագորեն կորցնում է իր ազդեցությունը. անհրաժեշտ է դրավոր խոսք՝ տպարան, մամուլ։ Կ. Պոլսի ազդեցիկ հայ գերդաստանների նյութական օժանդակությամբ 1855-ի հունիսին Կ. Պոլսի Արապյան եղբայրների տպարանում, ապա 4 ամիս անց իր սեփական տպարանում, Խրիմյանը հրատարակում է «Արծուի Վասպուրական» ամսագիրը, որի տիտղոսաթերթին գրված էր. «Արծուի Վասպուրական» թռուցեալ հայրենասէր թեօք յԱրծրունի գահէն ի Վան Տօսպ, Ա. տարի, թիվ 1, 1855 թ. յունիս, խմբագիր հայրենախօս Մկրտիչ վարդապետ Խրիմեան, Կոստանդնուպօլիս»։ Ամսագիրը գործակալներ ուներ Կ. Պոլսում, Զմյուռնիայում, Կաբինում ե Վանում, որոնք օժանդակում էին նրա բաժանորդագրությանն ու տարածմանը։

Խմբագիրն ամսագրի նպատակն էր համարում «դրել և խոսել զհայրենեացն, զնորին նախնի ճոխ բարգաւաճութեանցն, զվերջին դժբախտ վիճակացն, զհայրենաշէն քաջացն հայոց, զառաքինի հարցն հոգևոր և որ ինչ առ հայրենիսն վերաբերին»[2]։ Պայքարելով պանդխտության դեմ, որի պատճառով հայաթափ էր լինում արևմտահայ դավառը, խմբագիրը ճշմարիտ հայրենասիրությունը համարում է «բուն հայրենյաց երկրին մեջ բնակվելը» և հրավեր է հղում «տարաշխարհիկ հայկազուններին»՝ վերադառնալ հայրենիք, շենացնել մեր նախնիներից ժառանգություն ստացած երկիրը։ Հայրենի «փշալից դաշտերը» Խրիմյանը գերադասում է պանդխտության «ծաղկալից բուրաստաններից»։ 1855 թ. հունիսից մինչև 1856 թ. հունիսը ամսագիրը հրատարակվում է Կ. Պոլսում։ Լույս է տեսնում 12 համար։ Այդ ընթացքում Խրիմյանը տենդագին գործունեություն է ծավալում ամսագրի հրատարակությունը տեղափոխել իր անվանը վայել Վասպուրական։ Կայսրության ծովամերձ քաղաքների հայ գաղթօջախներն ապրում էին համեմատաբար աշխույժ մշակութային կյանքով։ «Գավառ» հորջորջվող բուն Արևմտյան Հայաստանը իսպառ զուրկ էր մամուլից, տպարանից։ Խրիմյանն առաջին գործիչն էր, որ ձեռնարկեց գուտենբերգյան հրաշագործության լույսը հասցնել բուն Արևմտյան Հայաստան։

Իր ազդեցիկ բարեկամների օգնությամբ, Կ. Պոլսի Հակոբոս պատրիարքի միջոցով Խրիմյանին հաջողվում է օսմանյան արքունիքից հրովարտակ ստանալ և դառնալ Վանի մերձակայքում գտնվող Վարագա վանքի վանահայրը։ 1856 թ. աշնանը իր երկու ընկերների՝ Տիգրան Գալփակճյանի և Միքայել Ռուբինյանի հետ նա մեկնում է Վան՝ իր հետ տանելով փայտյա և երկաթյա տպագրական մեքենաներ։ 1857 թ. հունվարին Վարագա վանքի վանահայրը սկսում է իր գործունեությունը։ Վանքի միաբանությունը Խրիմյանին դիմավորեց դժգոհությամբ, պատճառը տնտեսական գործոնն էր։ Վանքի հարուստ հասույթները յուրացնում էին տեղի մեծահարուստները՝ գործակցելով միաբանության անդամների հետ։ Նորեկ վանահայրը բարեկարգեց վանքը, նրա հասույթների մի մասը հատկացվեց նոր

---

1 Հ. Ա ա ե ս յ ա ն, Հայոց Հայրիկ, հ. 1. էջ 212, Գ. Գ յ ո ւ ղ ա լ յ ա ն, Մ. Խրիմյան (Գաղափարների աշխարհը), Պեյրութ, 1954, էջ 27։

2 Արծուի Վասպուրական. 1855, № 1։

բացվելիք հոգևոր վարժարանին և ամսագրի վերահրատարակությանը։ «Հյուսիսափայլի» թղթակիցը՝ ապագա նշանավոր վիպասան Բաֆֆին (Մելիքզադե) գրեց այն հալածանքի և թշնամության մասին, որոնց արժանացավ Խրիմյանը Վարագում, մի ժամանակ գնահատական տվեց նրա գործունեությանը. «Ոչ մի անգամ չէի տեսած ազգասիրական հոգին այդպես կենդանի, որպես այդ արժանապատիվ կրոնավորի մեջ»[8]։ Վարագում Խրիմյանն զգում էր աջակիցների և օգնականների խիստ կարիք։ Դրասք կարող էին լինել նոր սերնդի ներկայացուցիչները։ 1857 թ. մարտին Խրիմյանը գրեց հոգևոր «ժառանգավորաց» վարժարանի հիմնաքարը, իսկ դասավանդումն սկսվեց օգոստոսի մեկից։ 25 աշակերտի համար նախատեսված հոգևոր այդ դպրոցի դասասենյակները կահավորված էին գրասեղաններով, նստարաններով, գրատախտակներով, աշխարհագրական քարտեզներով և բնագիտական դիդակտիկ նյութերով։ Այդ տիպի դպրոցը նորություն էր հայկական աշխարհում։ Այդ հոգևոր դպրոցում դասավանդվում էին նաև աշխարհիկ գիտելիքներ՝ ընդհանրական տեղեկություն (բնագիտություն), թվաբանություն, աշխարհագրություն և այլն։ Վարժարանի մանավանդ առաջին շրջանավարտները արևմտահայ հասարակական կյանքի լուսավորության տարածման առաջին նախակարապետները եղան։ Բավական է նշել միայն մեկ նվիրական անուն՝ Գարեգին Սրվանձտյանց... Հայ բանահյուսության, բանագիտության և աղգագրության մեծ երախտավորի անունը, հայ եկեղեցու արժանավոր հայրերից մեկը, որի գիտական գործունեության արդյունավոր գնահատականը եղավ Պետերբուրգի հնագիտական կայսերական ակադեմիայի պատվավոր անդամի պատկառելի տիտղոսը. միայն այդ մեկ անվան նշումը բավական է ցույց տալու «ժառանգավորաց» ծավալած գործունեության ընդգրկուն ոլորտները։

1858 թ. հունվարից վերսկսվեց «Արծուի Վասպուրականի» հրատարակությունը։ Լայնացել էին ամսագրի տարածման շրջանակները՝ Արևմտյան Հայաստանի, Օսմանյան կայսրության հայաբնակ բազմաթիվ վայրեր, Պարսկահայք և նույնիսկ Արևելյան Հայաստան։ Բաֆֆին դարձել էր ամսագրի տարածման Պարսկահայքի գործակալը։ Խմբագրի սեղանն էլ պատահն էր ամսագիրը դարձնել արևելահայ և արևմտահայ ընթերցող հասարակայնության կապող օղակը։ «Արծվի» վարագյան շրջանն աչքի էր ընկնում կուռ կառուցվածքով։ Հրատարակվող նյութերը բաժանված էին հաստատուն բաժինների։ ա) Հանդես ատվածապաշտութեան՝ պարունակում էին հոդվածներ՝ քրիստոնեական հավատի, հայ եկեղեցու և հոգևորականության նշանավոր գործիչների մասին։ բ) Հանդիսարան հայրենաշեն առաքինեացն հայոց—մեծարվում էին հայ պետական և քաղաքական գործիչները՝ «նախնի քաջազունք մեր... նոցին հայրենագարդ գործոց ըստ ամենայն հանդամանաց ճառագրելով»։ գ) «Տեսարան հայրենի աշխարհաց» բաժինը նկարագրում էր Արևմտյան և Արևելյան Հայաստանի բնակավայրերը՝ քաղաքները, գյուղերը, վանքերը, մենաստանները, եկեղեցիները (այս բաժնի հոդվածները առավել արժևորվում են մանավանդ այսօր՝ մեր ժամանակի ընթերցողի առաջ պարզելով կորուսյալ հայրենիքի ճարտարապետական համալիրների պատկերը)։ դ) Բուսաստան բարոյական առաքինութեանց բաժինը իրենից ներկայացնում էր բարոյախոսական հոդվածներ, ուր գովերգվում են բարոյական անանց արժեքները և քննադատվում մարդկային մոլությունները։ ե) Թանգարան հայկական դպրութեան բաժինը պարունակում էր ինքնուրույն գեղարվեստական գործեր, թարգմանություններ, հին մատյաններից և հիշատակարաններից քաղված այնպիսի հատվածներ, որոնք վերաբերում էին հայ ժողովրդի պատմության որևէ նշանակալից իրադարձության կամ անցքի։

---

8 Հյուսիսափայլ, 1860, № 11, էջ 407։

Ամսագրի վարագյան շրջանը շահեկանորեն տարբերվում էր պոլիսյան շրջանից։ Ընդլայնվել էր հեղինակների շրջանակը, «ժառանգավորացի» ուսուցիչների և սաների հետ միասին՝ նաև արևելահայ գործիչներ (մասնավորապես՝ Ռաֆֆին)։ Ամսագրի հոդվածներն առավել բաղմաղան դարձան Մկրտիչ Խրիմյանի և նրա սանի՝ Գարեգին Սրվանձտյանցի Արևելյան Հայաստան կատարած ճանապարհորդությունից հետո։ Այն սկսվեց 1860 թ. նոյեմբերի 10-ին և վերջացավ 1861 թ. հուլիսի 16-ին։ Դրա հետևանքով ընդլայնվեցին ամսագրի տարածման շրջանակները, անհամեմատ բարձրացան հեղինակների մտահորիզոնը և հոդվածների մակարդակը։ Այս երրորդ շրջանում ամսագիրը աչքի է ընկնում բարձրացրած հարցերի նպատակասլացությամբ, համահայկական խնդիրներ արծարծելու ձգտումով։ Արևմտահայ և արևելահայ հասարակական կյանքի տարբեր կողմերի քննարկումներով աչքի ընկան Մ. Խրիմյանի «Խորհրդածություն Վասպուրական Արծվոյն իր ճանապարհորդության մեջը», «Հայկազանց հառաջադիմության կեդրոն բուն հայրենիքն է», «Հոգի և զգացողություն հայկազանց Հայաստանի», «Ժողովրդական դպրոց», «Ազգային կեդրոնական վարչություն», «Ազգային գավառական վարչություն», «Հայրենյաց նոր հառաջադիմության համար մարդ պետք է, թե Սահմանադրությունը» ծրագրային հոդվածները։ Դրանց խոսուն խորագրերը բացահայտում են առաջադրված հարցերի բազմազանությունը, հրատապ խնդիրները քննարկելու և յուրատեսակ ծրագիր առաջարկելու հեղինակի միտումները։ Չնայած ամսագիրը հրատարակվում էր Վարագում, նրա հոդվածներին արձագանքում էին օսմանյան մայրաքաղաքի հայ հասարակական շրջանակներում։ Հոդվածներից մի քանիսն արտատպվում էին Կ. Պոլսում՝ Հ. Սվաճյանի «Մեղվում»։ Ժամանակի գործիչներից Նշան Օտյանը (Գրիգոր Օտյանի եղբայրը) գրում էր Խրիմյանին. «Արծվոյն վերջին չորս թվերը եկան։ Հինգ թվոյն մեջ Ազգային կեդրոնական վարչության վրա գրած հոդվածը մեծ ուշադրությամբ և զմայլմամբ կարդացի։ ...Այս հոդվածը գլուխ գործոց է... (ընդգծումը հեղինակինն է—Է. Կ.) Ասանկ վսեմ, ազդու և բարձր գրված մը շատոնցե կարդացած չունեի. կեցցե Խրիմյան և իր ազգասեր ոգին»[4]։

Արևմտյան Հայաստանի տարածքի այդ առաջին պարբերականը խորը ակոսեց արևմտահայ հասարակական կյանքը, բարձրացրեց ժողովրդի ազգային ինքնագիտակցությունը, նրան ծանոթացրեց իր հերոսական անցյալի հետ, գավառահայության մեջ արթնացրեց ընթերցանության սեր և ուսման ծարավ։ «Արծուի Վասպուրականը» հրատարակվեց մինչև 1864 թ. (որոշ ընդհատումներով), ապա դադարեց։ Պատճառը Մ. Խրիմյանի և Գ. Սրբվանձտյանցի տեղափոխությունն էր պատմական Տարոն։

1862 թ. Կ. Պոլսի Ազգային կենտրոնական վարչության հրահանգով և պատրիարքի կոնդակով Խրիմյանը մեկնում է պատմական Տարոն՝ իբրև հոգևոր առաջնորդ և Մշո Ս. Կարապետի վանքի վանահայր։ Պատմական փառավոր անցյալ ունեցող հայաշունչ Տարոնը XIX դ. երկրորդ կեսին պետական պաշտոնյաների և քուրդ աշիրեթապետերի հարստահարություններից և հարկերի ծանրությունից բզկտված մի նահանգ էր։ Նորօրյա տերերը Տարոնը հայաթափ անելու նպատակասլաց քաղաքականություն էին վարում։ Այդ շարիքներին դիմագրավելու համար Տարոն է ուղարկվում Մկրտիչ Խրիմյանը։ Ազատագրական պայքարի ավանդույթներ ունեցող Ս. Կարապետի վանքն ուներ հսկայական հարստություն՝ գյուղեր, արոտավայրեր, անասուններ, շարժական և անշարժ գույք։ Այդ բոլորը մսխվում էր մի խումբ հոգևոր և աշխարհիկ ֆեոդալների, վանքի պորտաբույծ միաբանության, մերձակա գյուղերի ռեիսների, աղաների և համփանների կողմից։ Իրենց բաժինն ունեին նաև քուրդ շեյխերն ու բեկերը։ Խրիմյանի գալուստը

---

4 Հայաստանի Հանրապետության Պատմության կենտրոնական պետական արխիվ (այսուհետև՝ ՀՀ ՊԿՊԱ), ֆ. 57, գ. 125, թ. 25։

խռովեց վանքի անդորրը։ Նորընտիր վանահայրը ստեղծեց տնտեսական խորհուրդ, որը խիստ հսկողություն սահմանեց վանքի հասույթների վրա, որպեսզի դրանք օգտագործվեն աղքատ ձեռնարկություններում։ Նա կազմեց նաև բարենորոգումների ծրագիր։ Այդ բոլորը Խրիմյանի դեմ հարուցեց վանքի միաբանության, հոգևոր և աշխարհիկ վերնախավի զայրույթը, որը չէր ուզում զրկվել իր հասույթներից։ Ժամանակակից Երեմիա Տեկանցը այդ մասին գրում է. «Պետք և բռնավորք աշխարհին հարստությանը Գլակա վանից (Ս. Կարապետի վանքի հին անունն է—է. Կ.)... որևիցէ եղանակով շորթեին ի եկամտից վանուցն... Իսկ Խրիմյան անմիջապես զշահս նոցա խսպառ ցամաքեցուց, ուստի նոքա բոլոր զորությամբ զինեցան ընդդեմ նորա»[5]։ Սկսվեց մի երկարատև պայքար, մի կողմից՝ վանքի միաբանության և մյուս կողմից՝ նորեկ վանահոր և իր կողմնակիցների միջև։ Դա պայքար էր երկու տարբեր գաղափարախոսությունների, սոցիալական տարբեր խմբավորումների միջև։ Ժողովրդի ծոցից դուրս եկած վարդապետը պայքարում է ժողովրդի շահերի համար՝ ընդդեմ սեփական և այլազգի ցեցերի։ Կառավարական պաշտոնյաները դաշն են կնքում Խրիմյանի ընդդիմադիրների հետ՝ նրան հեռացնելու նպատակով։ Մինչ հոգևոր առաջնորդը ծանր և տքնաջան աշխատանք էր տանում հայ գյուղացու հարկային բեռը թեթևացնելու, հարկահանների ապօրինությունները սահմանափակելու ուղղությամբ, նրա նախկին սանը, այժմ զինակիցը՝ Գարեգին Սրվանձտյանցը, ուսուցչի և հոգևոր առաջնորդի հսկողությամբ ու խորհրդով Ս. Կարապետի վանքում բացում է մի նոր հոգևոր «Ժառանգավորաց» վարժարան և 1863 թ. ապրիլին սկսում հրատարակել «Լրատար Արծուիկ Տարոնո» երկշաբաթաթերթը, որի տիտղոսաթերթին նշված էր՝ «Թուղեալ թևոք Վասպուրական Արծուոյն»։ Դրանով ազդարարվում էր «Արծուի Վասպուրականի» ավանդույթներին հավատարիմ լինելու մասին։ «Արծվիկը» մերկացնում էր կառավարական տեղական պաշտոնյաների կամայականությունները, ժողովրդի բողոքի ձայնն էր հնչեցնում օսմանյան մայրաքաղաքի հայության և Բ. Դռան ականջին։ Երկշաբաթաթերթի էջերում տպվեց մշեցիների աղերսագիրը՝ ուղղված Կ. Պոլսի հայոց պատրիարքարանին[6]։ Տարոնի բոլոր հայկական գյուղերի գյուղացիության, գյուղապետերի անունից գրված այդ «ողբախառն աղերսը» փաստորեն ավելի շատ ըմբոստ բողոք էր, քան խորազրում նշված «աղերս»։ Հոդվածի հիմնական լեյտմոտիվը «ալ դանակը մեր ոսկորին հասած է» արտահայտությունն էր։ Հարությունն Սվաճյանն այդ հոդվածն ամբողջությամբ արտատպեց «Մեղվում»[7], իր լիակատար համերաշխությունն արտահայտելով նրանում արծարծված մտքերին։

Խրիմյանի առաջնահերթ խնդիրը դարձավ տարոնահայության վզին ծանրացած հարկերի գանձման կարգավորումը։ Դա առավելապես վերաբերում էր թաշիրին, որը պետք է գանձվեր բերքի և եկամտի 1/10-ի չափով։ Արքունի հարկահավաքները, հարկ գանձող կապալառուները բնատուրքի փոխարեն գյուղացուց դրամ էին պահանջում, որը մի քանի անգամ բարձր էր բերքի արժեքից։ Այդ պատճառով գյուղացիները հրաժարվում էին բանջարեղենի մշակությունից. անշահութաբերության պատճառով գյուղատնտեսական զանազան կուլտուրաներ այլևս չէին մշակվում, որը բացասաբար էր անդրադառնում երկրագործության զարգացման վրա։

Հոգևոր առաջնորդները սովորաբար օժանդակում և աջակցում էին հարկահավաքներին։ Այլ էր Խրիմյանը։ Բաղեշից Մուշ եկած հարկահավաք Շևքի էֆենդուն աջակցելու փոխարեն նա կազմակերպում է իր թեմի սահմաններում գտնվող գյուղապետերին՝ միասնաբար հրաժարվել թաշիրը

---

5 Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան (այսուհետ՝ Մատենադարան), ձեռագիր 4177, էջ 72։

6 Արծուիկ Տարոնո, 1863, № 3։

7 Մեղու, 1863, № 208, 210, 212։

դրամով վճարելուց։ Գյուղապետերի միաբանությունը շուտով քայքայվում է Ս. Կարապետի միաբանության որոշ անդամների և աղայական վերնախավի սադրանքներով։ Թուրք դայմադամին տեղեկացնում են հոգևոր առաջնորդի «հակապետական» գործունեության մասին։ Հարկահավաքի քսությունները Մուշ է գալիս օսմանյան մյութեսարրիֆ, որի մոտ վանքի միաբանության անդամները, «Մամիկոնյան Վարդան աղան, Կոնճոյան Մովսեսն սկսան մատնել և դրպարտել դխրիմյան..., ասելով, թե Խրիմյան ունի կազմյալ ի մեջ քաղաքի գաղտնի ժողով ընդդեմ տաճկական ժողովին, ի ոուսահայոց կասկածավորս բերյալ բնակեցուցանն ի մեջ Վանա, ժողովուրդն հապստամբություն դրգռե, արգելով տալ դմաքս և տասանորդ և այլ անլուր բանա...»[8]։ Գյուղացիները, լսելով այդ մատնության լուրը, հարձակվում են վարդապետների վրա, որոնք փախչում և թաքնվում են իրենց խցերում։ Սակայն մատնությունը շարունակվում է։ Նույն Մամիկոնյան Վարդան աղան հավաքում է «Արծուիկ Տարոնոյի» հոդվածները, թարգմանում դրանք և հայերեն բնագրերի հետ հանձնում դայմադամին՝ Խրիմյանին ներկայացնելով իբրև քաղաքականապես անբարեհույս, ժողովրդին գրգռող և օսմանյան պետության դեմ ոտքի հանող։ Մատնությունից բացի, թշնամիներն անցնում են հին և փորձված միջոցների։ Երեք անգամ մահափորձ են կազմակերպում Խրիմյանի դեմ[9], քուրդ ավազակի վարձելով ահաբեկչության համար։ Բ. Դուռը պատրիարքարանի միջոցով Տարոնի հոգևոր առաջնորդին կանչում է Կ. Պոլիս՝ քննելու նրան ներկայացված մեղադրանքները։ Կ. Պոլսում հրատարակվող «Ժամանակը» գուժեց արևմտահայությանը. «Խրիմյանի համար սոսկալի մատնություններ եղան, որոնք միայն Խրիմյանի չեն վերաբերիր, այլ ընդհանուր աղղին։ «Արծվիկ» թերթին մատնությունը ու անոր խափանումը, տպարանի դոցվիլը և վարժարանի ցրվիլը դեռևս մոռացված չեն, ասոնք փո՞քր հանցանքներ են և նույնիսկ Սահմանադրության դեմ աքացի հարված»[10]։ Երկու ամիս ու կես Խրիմյանը Կ. Պոլսում տենդագին գործունեություն է ծավալում, Ազգային կենտրոնական վարչությունը և պատրիարքին ներկայացնում իր անմեղությունն ապացուցող փաստաթղթեր՝ ինքն էլ իր կողմից մեղադրելով Բիթլիսի դայմագամին և թուրք հարկահավաքներին, որոնք իրենց ապօրինի գործողություններով քայքայում են գյուղացիությանը, որից մեծապես տուժում է երկրագործությունը. «Գեղացին հարստահարվելով ուժեն կթափի, երկրագործություն, մաճ և արոր կդադրին և հետևապես տասանորդական տուրքը վերջի նվազման կետ կհասնի»[11]։

Արդարացած Խրիմյանը նորից վերադառնում է Տարոն։ Վերսկսվում են ժամանակավորապես դադարած «Արծվիկի» հրատարակությունը, ազգային-լուսավորական աշխատանքները։ Տարոնի թեմում գտնվող բազմաթիվ գյուղերում վարժարաններ են բացվում։ Մեծ գործ է կատարվում Ազգային ուսումնարանը Տարոնում գործարելու ուղղությամբ։ «Արծվիկ» էջերում քննադատվում են Կ. Պոլսում ծվարած «փափկակենցաղ հոգևորականներ, որոնք սնոտիաբեր էին «ազգասիրության» վիճակի նկատմամբ. «Աշխարհ մը կանցնի, կպոռանք, կպոռանք, բայց մեր աղգասերներ, որ ամարանոցներ կերթան, որ Եվրոպա օդափոխության, որ պաշտոնեն հրաժարական կուտա, որ կերպ-կերպ վայելչասիրությամբ կղվարճանա։ Սրբազանե՞ր, գավառներ դնացին ձեռաց։ Վարչությո՞ւն, Հայաստանի մեջ մեկ գայլուն կյանք չմնաց, չմնաց, չմնաց...»[12]։ Տարոնում ծավալած ժողովրդա-

8 Մասենադարան, ձեռ. 4177, էջ 53։

9 Արծուիկ Տարոնոյ, 1863, № 5։

10 Ժամանակ, Կ. Պոլիս, 1864, № 47։

11 Ե. Չարենցի անվան Գրականության և արվեստի Թանգարան (այսուհետև՝ ԳԱԹ), Խրիմյանի ֆ., գ. 141, էջ 11—17 (ամբողջ տեղեկագիրը)։

12 Արծվիկ Տարոնոյ, 1864, № 31։

նվեր գործունեության համար տարոնահայության կողմից հոգևոր առաջնորդը մեծարվում է «Հայրիկ» պատվանունով։ Այդ գործունեությանը իբրև գնահատական, Կ. Պոլսի պատրիարքը նրան շնորհում է եպիսկոպոսական վկայական, իսկ 1868-ին Գևորգ Դ (Կոստանդնուպոլսեցի) կաթողիկոսը էջմիածնում նրան ձեռնադրում է եպիսկոպոս։

Խրիմյանի ծավալած հայրենանվեր գործունեության յուրատեսակ արժեքավորումն էր 1869-ին Կ. Պոլսի Ազգային ժողովի կողմից նրան հայոց պատրիարք հաստատելը։ Նրա պատրիարքության 4 տարիներն անցան թեժ պայքարի մթնոլորտում։

Չնայած 1863-ից օսմանյան կառավարությունը վավերացրել էր հայոց Ազգային սահմանադրությունը, սակայն, Արևմտյան Հայաստանում այն բոլորովին չէր գործադրվում։ Մինչ Խրիմյանը XIX դ. Կ. Պոլսի պատրիարքական գահին բազմել էին Օսմանյան կայսրության ծովամերձ գաղթօջախների՝ համեմատաբար «բարվոք» վիճակում գտնվող հայության ներկայացուցիչները։ Խրիմյանը առաջին բարձրաստիճան հոգևորականն էր, որ ներկայացնում էր բուն Արևմտյան Հայաստանը։ Պատահական չէ, որ նորընտիր պատրիարքը իրեն համարում էր «Հայաստանի ցավոց պատկերը»՝ իր գործունեության մտասևեռ գաղափարը դարձնելով գավառահայության վիճակի բարվոքումը։ Հայոց Ազգային սահմանադրության հեղինակները Եվրոպայում կրթություն ստացած, եվրոպական երկրների սահմանադրություններին քաջածանոթ, նոր շնչով համակված երիտասարդներն էին, որոնք աղոտ և մշուշոտ պատկերացում ունեին Արևմտյան Հայաստանի մասին։ Նորընտիր պատրիարքը պահանջում էր վերաքննել Ազգային սահմանադրությունը՝ այն համապատասխանեցնելով արևմտահայության շահերին։ Հայ եկեղեցու անվանի տարեգիրն ու պատմագիրը՝ Մաղաքիա Օրմանյանը, արժեքավորելով Խրիմյանի պատրիարքական գործունեությունը, գրում էր. «Ինքն գավառի զավակ, գավառական կյանքի անձնանվեր, գավառի ժողովրդին վիճակով տոգորված և գավառացի տարրին բարվոքումը միայն իրեն նպատակ դրած, գավառեն զատ բան չխոսեցավ, գավառեն զատ բան չլսեց, բայց դժբախտաբար, այդ նպատակին մեջն ալ արդյունավոր չեղավ...»[13]։ Անհնար է համաձայնել այս մտքի հետ, մանավանդ, երբ նկատի ենք առնում, որ գավառ կոչվողը Արևմտյան Հայաստանի հսկա տարածքն էր, որի երկուկես միլիոն հայ բնակչությունը Ազգային ժողովում ուներ ավելի քիչ թվով երեսփոխաններ, քան 200.000 հայություն ունեցող Կ. Պոլիսը։ Պատրիարք Խրիմյանը պահանջում էր ընտրության հավասարություն Պոլսի և «գավառի»՝ Արևմտյան Հայաստանի համար։ Այդ պարագայում Ազգային ժողովում հնչելիք կլիներ բուն երկրի գյուղացիության և արհեստավորության ներկայացուցչությունը, որը կդառնար նոր պատրիարքի հենարանը։ Խրիմյանի այդ պահանջը հանդիպեց Կ. Պոլսի էֆենդական դասի կատաղի դիմադրությանը։

Խրիմյանի պատրիարքական շրջանի ժողովրդական գործունեության ցայտուն արտահայտությունն էր նրա ծավալած պայքարը Պողոս եպիսկոպոս Մելիքյանի դեմ, որը դեռևս 1860-ականներից, դաշն կնքած հայ շորպաջիների, քուրդ հեյխերի ու դերեբեյիների հետ, կեղեքում էր ժողովրդին։ Իր արժանավոր սան Գարեգին Սրվանձտյանցի միջոցով պատրիարք Խրիմյանին հաջողվում է պողոսյան-ապողոսյան պայքարը հասցնել ապողոսյանների համար հաղթական ավարտի և Բ. Դռան թագրիրով 1872-ին նրան հեռացնել Վասպուրականի հոգևոր առաջնորդի պատասխանատու պաշտոնից։

Խրիմյանի պատրիարքական շրջանի ամենակարևոր գործը եղավ գավառական հարստահարություններն ուսումնասիրող հանձնաժողովի ստեղծումը 1870 թ. նոյեմբերի 27-ին։ «Հանձնախումբը» բաղկացած էր 9 ան-

13 Մ. Օրմանյան, Ազգապատում, հ. Գ, Երուսաղեմ, 1927, էջ 4255։

դամից. չորսը՝ հոգևորական, հինգը՝ աշխարհականներ։ Հանձնախմբի նախագահը Ներսես Վարժապետյանն էր։ Պատրիարքի հատուկ շրջաբերականով հանձնախումբը օժտվեց լիազորություններով, կապ հաստատեց գավառների հետ՝ իրականության ճշգրիտ պատկերը ներկայացնելու համար։ Մեկ տարի անց՝ 1871 թ. նոյեմբերին հանձնաժողովին հաջողվեց ավարտել գործը և Ազգային ժողովի քննությանը ներկայացնել իր տեղեկագիրը։ Ազգային ժողովի երեսփոխանները հարցի քննարկումը ձգձգեցին մինչև 1872 թ. ապրիլ։ Անպտուղ վիճաբանությունները, խառնակությունները հասան այն աստիճանին, որ Բ. Դուռը միջամտեց՝ արգելելով պատրիարքարանին հարստահարությունների վերաբերյալ որևէ փաստաթուղթ քննարկել[14]։ Միայն այդ հանգամանքը սթափեցրեց Ազգային ժողովին, որը 1872 թ. ապրիլի 12-ին գավառական հարստահարությունների տեղեկագիրը հանձնեց Բ. Դռան։ Այդ գործողությունը փաստորեն Հայկական հարցի լուծման նախնական փուլն էր, որը սերտ առնչվում էր նրա երկու գլխավոր գործիչների՝ Մկրտիչ Խրիմյանի և Ներսես Վարժապետյանի հետ։ Ազգային սահմանադրության վերաքննության համար ծավալված անպտուղ վեճերը, սահմանադրությանը հավատարիմ մնալու քողի տակ էֆենդիական դասի դիմակայությունը պատրիարքին ստիպեցին 1873 թ. օգոստոսին հրաժարական ներկայացնել Ազգային ժողովին։ Դա ժողովրդական ուժերի պարտությունն էր։ Իրավացի էր հետազոտողը, երբ գրում էր. «Նա առաջին... պատրիարքը եղավ, որ բողոքեց սահմանադրության մեջ գավառների կարիքների անտեսման դեմ։ Նրա պայքարը սահմանադրության վերանայման համար գավառի ըմբոստացումն էր Պոլսի էֆենդիության դեմ»[15]։

Հրաժարված պատրիարքը որոշ ժամանակ ապրեց կայսրության մայրաքաղաքում։ Թվում էր, նա հեռացել էր աղգային հասարակական գործունեության ասպարեզից և, քաշված Գուզկունճուք հայաբնակ թաղամասի իր բնակարանում, «լուռ ու մունջ» զբաղվում էր գրական գործունեությամբ։ Բայց դա սոսկ երևութական էր։ Անհանգիստ Խրիմյանը ակնդետ հետևում էր Ազգային ժողովի նիստերին և կայսրության մեջ խմորվող նոր երևույթներին։ Պատմական թատերաբեմ էր մտնում «նոր օսմաններ» հոսանքը, որը եվրոպական պետությունների ճնշող ձեռքը Թուրքիայից հեռացնելու միտումով կյանքի էր կոչում նոր ծրագրեր։ Նրանց պարագլուխ Միդհատ փաշան դառնում է թուրքական սահմանադրության հեղինակը։ Խորամանկ Աբդուլ-Համիդ II-ը առերես համաձայնում է Միդհատ փաշայի ծրագրերին և 1876 թ. դեկտեմբերին Թուրքիան հռչակում սահմանադրական միապետություն։ Կատարվում են խորհրդարանական ընտրություններ, ընտրվում երեսփոխանական ժողովի անդամներ, իսկ Սենատի կամ Ծերակույտի անդամները նշանակվում են սուլթանի կողմից։ Մեծ ժողովրդականություն վայելող Մկրտիչ Խրիմյանը նշանակվում է Սենատի անդամ։ Այդ շրջանում Խրիմյանը գրում է «Ժամանակ և խորհուրդ յուր» փոքրածավալ աշխատությունը (1876 թ.), որը հույսերի, սպասումների, կասկածների ու տարակույսների, բազմաթիվ անպատասխան հարցականների մի համաձուլվածք է։ Չնայած այն հանգամանքին, որ հեղինակն ավետում է նոր ժամանակների գալուստը, սակայն միաժամանակ հավաստում է, որ իր կողմից հռոմեական-ստրկատիրական պետության հետ համեմատվող Թուրքիան ի վիճակի չի լինելու իրականացնել սահմանադրության հռչակած բարենորոգումները։ Արդարանում են Խրիմյանի կասկածները։ Այն ժամանակ, երբ կայսրության մայրաքաղաքը շքեղ հրավառությամբ նշում էր սահմանադրության հաղթանակը, գավառում՝ բուն Արևմտյան Հայաստանում, սաստկացել էր հայահալած քաղաքականությունը, որը նպատակամղված

14 ԳԱԹ, Հ. Առաքելյանի ֆ., գ. 182, էջ 49։

15 Ռ. Հովհաննիսյան, Արևմտահայ աղգային-ազատագրական շարժումները և Նարինի «Պաշտպան Հայրենյաց» կազմակերպությունը, Ե., 1965, էջ 81։

էր հայության տնտեսական կյանքի քայքայմանը։ 1876 թ. դեկտեմբերի 1-ին նախօրոք մշակված պլանով հրդեհվեց Վանի վաճառաշահ շուկան՝ 500-ից անցնող խանութներով, որոնց տերերը միայն հայերն էին։ Մի գիշերվա ընթացքում շեն ու վաճառաշահ քաղաքի շուկան ենթարկվեց հրի և ավերի։ Հրդեհի կիսատ թողած գործն ավարտեցին թուրք ու քուրդ ամբոխը, ոստիկաններն ու զինվորները։ Հարազատ քաղաքի ողբերգության լուրը ցնցեց Խրիմյանին։ Մի ամիս չանցած՝ հոգեկան ծանր խռովքից ժայթքեց Խրիմյանի հոգու հրաբուխը, լույս տեսավ «Վանգույժը»՝ ողբի, բողոքի ու ցասման ուժգին արտահայտությունը։ Խրիմյանը մեղադրում էր իր հայրենակիցներին չափից ավելի հնազանդ լինելու մեջ. «Ո՞վ հավատարիմ ժողովուրդ հայոց, մարդիկ և աղջեր կան, որ քու այնչափ հավատարմությունդ կծաղրեն ու կը մեղադրեն զքեզ, երբ կտեսնան որ խիստ անմռունչ և անզգա կը լինիս հավատարմությանդ մեջ... Մի՞թե գռեհաց կա՞վ ես դու աշխարհիս երես, ես էլ կդատիմ զքեզ, թե այդչափ ստրկանաս և աղարտես մարդկության ագատ պատիվ»[16]։ Այս փոքրիկ գործը գրավեց իշխանությունների ուշադրությունը։ Նրանք արգելեցին գրքի վաճառքը և հավաքեցին ողջ տպաքանակը։ Սակայն որոշ օրինակներ արդեն տարածվել էին ժողովրդի մեջ։ Գրքում արտահայտված բողոքի և ընդվզման համար Խրիմյանը, իբրև պատժամիջոց, հեռացվեց Սենատի անդամությունից։ Բայց Խրիմյանը չընկրկեց։ Ապրիլին գրքույկը վերահրատարակվեց Թիֆլիսում և արժանացավ ջերմ ընդունելության։

«Վանգույժի» տրամաբանական շարունակությունը եղավ «Հայգույժը», որը ցավագեն արձագանքն էր 1877—78 թթ. ռուս-թուրքական պատերազմի ժամանակ Շեյխ Ջալալեդդինի կողմից Ալաշկերտի հովտի հայ բնակչության սահմռկեցուցիչ կոտորածների։ Կարծես թե հետին պլան մղվեց այրված և ավերված «բնակասունդ հայրենիքի» վերաշինության խնդիրը։ Պատմության հոլովույթում շարունակվեց Մովսես Խորենացու օրերից սկսած հայ ողբերի շարքը։ Բայց այս ողբը, ինչպես և նույն հեղինակի առաջին ողբը, այդ բոլոր ողբերից էականորեն տարբերակվում էր։ Անմռունչ մորթվելու փոխարեն Խրիմյանը պահանջում էր ձեռք բերել «խեթկիչ եղջյուր» և ցուլի նման ոգորել բռնակալների դեմ։ Ազգային ինքնագիտակցության և մարդկային արժանապատվության կոչ էր հնչեցնում հեղինակը, ահազանգում ժողովրդին. «Դեռ պիտի կոտորվիք, դեռ պիտի մորթվիք... քանի որ անզեն, անեղջյուր, անասպար կապրիք, դուք մարդ եք, ձեռք և բազուկ ունիք, միթե անզգացած մեռեր է ձեր սրտմտության ոգին»[17]։ Այդ մտքի տրամաբանական շարունակությունը կարող է լինել միայն պայքարի հրավերը և հեղինակը նկատում է. «Մեր նախնի քաջեր Եկեղեցվո և Հայրենյաց ազատություն մահով և արյունով գնեցին։ Միթե դու ցանկալի ազատություն առանց զոհի և արյան ձրի՞ ստանալ կուզես»[18]։

Ավարտվում են գույժերը։ Գալիս է հուսո ժամանակը, գործելու ժամանակը։ 1877—78 թթ. ռուս-թուրքական պատերազմում ռուսական զորքերի հաղթանակը նոր հույսեր է արթնացնում հայության սրտերում։ Խրիմյանի նախաձեռնությամբ Կ. Պոլսի բարձրաստիճան հոգևորականությունը դիմում է Կ. Պոլսի պատրիարք Ներսես Վարժապետյանին՝ ռուսական դիվանագիտական և ռազմական դեկավար գործիչների հետ Հայկական հարցը քննարկելու խնդրանքով[19]։ Այդ հանդիպումները մեծապես նպաստեցին Սան-Ստեֆանոյի դաշնագրում տեղ գտած 16-րդ հոդվածին, որը քրդերից և չերքեզներից հայության պահպանության և Հայաստանում բարեփոխում-

---

16 Խրիմյան Հայրիկ, Երկեր, Ե., 1992, էջ 422։

17 Նույն տեղում, էջ 444։

18 Նույն տեղում, էջ 445։

19 Սարուխան, Հայկական խնդիրը և Ազգային սահմանադրությունը Թուրքիայում (1860—1910), հ. Ա, Թիֆլիս, 1912, էջ 265։

ներ կատարելու հարցն էր։ Նախկին պատրիարքին է վերապահվում Բեռլինի վեհաժողովում արևմտահայության ինքնավարության ծրագիրը մեծ տերություններին ներկայացնելու գործը։

1878 թ. մայիսից հայկական պատվիրակությունը՝ Խրիմյանը իր թարգմանիչ և քարտուղար Մինաս Չերազի հետ այցելում է Եվրոպական մեծ տերությունների արտաքին գործոց նախարարներին, բազմաթիվ հանդիպումներ ունենում տարբեր աստիճանի գործիչների հետ, նրանց ներկայացնում հայ ժողովրդի ծանր կացությունը և առաջարկներն ու պահանջները։ Ժողովրդի ծոցից ելած գործիչը, որ մեծ տերությունների ղեկավարների մոտ ցանկանում էր պաշտպանել իր ժողովրդի արդար դատը, աստիճանաբար հանգում է այն գաղափարին, որ բոլոր մեծ տերություններն առաջնորդվում են սնփական շահերով, և փոքր ազգությունների ճակատագիրը նրանց ձեռքն մանրադրամի արժեք ունի։ Այդ մտայնությունն առավել ամրապնդվում է, երբ հայոց պատվիրակությանն արդելվում է մասնակցել վեհաժողովի նույնիսկ այն նիստին, որ քննարկվում էր 16-րդ հոդվածը, որը ճակատագրի հեգնանքով Բեռլինում վերափոխվեց 61-ի։ Բեռլինից վերադարձած Խրիմյանը էապես տարբերվում էր նախկին Խրիմյանից։ Վեհաժողովի և դաշնագրի արդյունքներից պատրանաթափ դարձած Կ. Պոլսի Գում-Գաբուի Մայր տաճարում ժողովրդի հետ հանդիպման ժամանակ արտահայտում է իր խորը հիասթափությունը։ Թղթե և երկաթե շրջափով կաթսայից հուրհրա վերցնելու այլաբանական պատկերով, ապա ուղղակի, Խրիմյանը դիմում է օսմանյան մայրաքաղաքում կուտակված գավառացի պանդուխտներին. «Սիրելի և օրհնյալ հայաստանցիներ, երբ հայրենիք վերադառնալու լինիք ձեր բարեկամաց և ազգականաց իրրև պարգև մեկ-մեկ զենք տարեք, զենք առեք և դարձյալ զենք։ Ժողովուրդ, ամենեն առաջ քո ազատության հույսը քո վրա դիր, քո խելքին և բազկին ուժ տուր, մարդ ինքնիրեն պետք է աշխատի, որ փրկվի»[20]։ Այդ ջաղափարները պարարտ հող են գտնում և ծլարձակվում ժողովրդի սրտում։ Սկսվում է ֆիդայական շարժման արշալույսը, որն ունեցավ թեժ կեսօր և դժնդակ երեկո-արևամուտ։

17 երկար ու ձիգ տարիների բացակայությունից հետո Խրիմյանը վերստին վերադառնում է հայրենի Վան՝ վարելու հոգևոր առաջնորդի դժվարին ու պատվավոր գործը։ Դժվարին տարիներ էին Արևմտյան Հայաստանի համար։ Վանը տառապում էր պատերազմի անմիջական ուղեկից սովի ճիրաններում։ Իշխանությունների տեղական մարմինները, հաշվի չառնելով բնակչության տագնապի ահազանգերը, դիտմամբ. աննշան գնով Պարսկաստանին են վաճառում հացի պաշարները, ժողովրդին թողնելով թշվառության մեջ[21]։ Խրիմյանը գործադրում է հնարավոր բոլոր միջոցները. նա Սովելոց հանձնաժողովի նախագահն է։ Նրա վայելած անանխադեպ սիրո, հարգանքի և հեղինակության շնորհիվ աշխարհի 4 ծագերի հայությունը միջոցներ է հանգանակում սովյալներին փրկելու համար։ Մեծ մարդասերն ու փիլիսոփան այդ գումարից բաժին էր հանում նաև տեղի քրդերի ու Բուրքերի համար՝ հաճախ առաջացնելով իր գործընկերների դժգոհությունը։

1880-ական թվականներին Արևմտյան Հայաստանի զանազան վայրերում՝ Վանում, Կաբինում, Փոքր Հայքում ստեղծվում են Հայաստանի ազատագրության նպատակը հետապնդող գաղտնի կազմակերպություններ։ Կարծես անտես թելերով այդ վայրերի գործիչները կապ են հաստատում Խրիմյանի հետ՝ իրհուրդներ և աջակցություն ստանալով նրանից[22]։ Այդ փաստերը հավաստում են Վանում գտնվող տարբեր երկրների հյուպատոս-

---

20 Հ. Ա ճ ե մ յ ա ն, Հայոց Հայրիկ, Թավրիզ, 1929, էջ 511։

21 Архив внешней политики России (այսուհետև՝ АВПР). ф. Армянские дела, 1880—1882 гг., д. 119. л. 6.

22 Հ. Ն շ կ յ ա ն, Առաջին կայծերը, էջ 94—95, 99, 110։

ների և նրանց գործակալների զեկուցագրերը, բազմաթիվ արխիվային վավերագրեր[23]։ Անմիջապես Խրիմյանի հսկողության տակ է ընթանում Վանի «Սև խաչ» գաղտնի կազմակերպության ծավալած գործունեությունը։ Բոլոր այդ իրադարձություններին տեղյակ Բ. Դուռը անցանկալի է գտնում այդ «անհանգիստ» հոգևորականի ներկայությունը հայաշատ Վան-Վասպուրականում և 1884 թ. հատուկ հրահանգով նրան կանչում է Կ. Պոլիս։ Վեց տարի Խրիմյանը գործում էր Կ. Պոլսում, ուր կրոնական ժողովի ատենապետն էր և Ազգային ժողովում ունեցած իր ելույթներով պատրիարքի և Աղգային ժողովի ուշադրությունն էր հրավիրում Արևմտյան Հայաստանի օրրստորև վատթարացող կացության, կառավարության հայահալած քաղաքականության սաստկացման վրա։

Նորաստեղծ Ազգային կուսակցությունները, մասնավորապես «Հնչակը» իր առաջին քայլերն էր կատարում Կ. Պոլսում։ 1890 թ. Էրզրումի հունիսյան դեպքերի տհաճ տպավորություն գրելու և կառավարության ուշադրություն հայկական բարենորոգումների վրա հրավիրելու միտումով, Կ. Պոլսում հուլիսին կազմակերպվում է խաղաղ ցույց, որին, սուլթանի հրամանով միջամտում է ոստիկանությունը։ Ցույցի մասնակիցները կանգնում են գատարանի առաջ։ Բ. Դուռը, որը Խրիմյանի մեջ տեսնում էր քաղաքականապես անբարեհույս հոգևորականի, նրան աքսորում է Եբուսաղեմ, ուր Ս. Հակոբա վանքի խցերից մեկում «արծվին փակել էին ճնճղուկի վանդակի մեջ»։

1892 թ.. մայիսի 5-ին Մկրտիչ Խրիմյանը 72 տարեկանում էջմիածնում միաձայն ընտրվեց Ամենայն հայոց կաթողիկոս։ Հաստատման ցարական հրովարտակը ստացվեց միայն տասներեք ամիս անց։ Պատճառն այն էր, որ թուրքական սուլթանը չէր ցանկանում ըմբոստ հոգևորականին ազատել թուրքական հպատակությունից և համոզում էր ռուսական ցարին, թե Խրիմյանի ներկայությունը էջմիածնում նոր խռովությունների առիթ է տալու։ Աբդուլ-Համիդն առաջարկում էր Նիկոլայ II-ին՝ հրահանգել նոր կաթողիկոսական ընտրություններ անցկացնելու համար[24]։ Միայն Նիկոլայ II-ի առարկությամբ, թե Խրիմյանին կաթողիկոս չվավերացնելը պատճառ կդառնա ավելի մեծ հուզումների, սուլթանը կատարեց ցարի խնդրանքը և ազատեց թուրքահպատակությունից։

1893 թ. սեպտեմբերի 26-ին Վարագա Ս. Խաչի տոնի օրը էջմիածնի Մայր տաճարում Խրիմյանն օծվեց կաթողիկոս։ Օրը մռայլ էր և ամպամած։ Օծման արարողության ժամանակ փայլատակեց արևը։ Հանդիսությանը մասնակցող ժողովուրդը ցնծագին աղաղակներով թնդացրեց օդը՝ երևույթը համարելով երկնային նախանշան։

Ծանր ու փոթորկոտ էին Խրիմյանի կաթողիկոսական տարիները։ Ցարիզմը, գործակցած Բ. Դռան հետ, աշխատում էր խեղդել հայ ազգային-ազատագրական շարժումները։ Կովկասի կառավարչապետ հայատյաց Գոլիցինի սադրանքով 80-ականների վերջերից սկսվեց հալածանքը՝ հայկական մշակութային օջախների, դպրոցների, ապա նաև հայ եկեղեցու նկատմամբ։ Պետականությունից զուրկ հայ ժողովրդի համար եկեղեցին կատարում էր ազգապահպան և ազգահավաք մեծ գործ։ Նրա միջոցներով էին պահվում կուլտուր-կրթական հաստատությունները։ 1903 թ. հունիսի 12-ին Նիկոլայ II-ը ստորագրեց հայ եկեղեցու շարժական և անշարժ գույքը հարքունիս գրավելու հրամանը։ Հայ հասարակական կազմակերպությունները, կուսակցությունները, ողջ հայ ժողովուրդը Ամենայն հայոց կաթողիկոսի գլխավորությամբ բողոքի ձայն բարձրացրին պետական մակարդակով կատարվող այդ մեծ կողոպուտի դեմ։ Կաթողիկոսի նախաձեռնությամբ և մասնակցությամբ կազմվեցին բողոքի բազմաթիվ փաստաթղթեր[25] ուղղված

---

23 АВПР. Полн архив. 1881—84, д. 1625, л. 123.

24 АВПР. Главный архив. ф. Армянские дела, д. 191. л. 5—6, 11. 14—15, 25—26.

25 ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 56, ց. 1, գ. 73, թ. 1—34, ԳԱԹ, Խրիմյանի ֆ. I Բ, գ. 164։

Նիկոլայ II-ին, Մերունաղարդ Խրիմյանը երիտասարդի ավյունով գլխավորեց համաժողովրդական այս շարժումը մինչև 1905 թ. օգոստոսը, երբ արտաքին և ներքին հանգամանքների ճնշման տակ ցարը ստորադրեց հայ եկեղեցու ունեցվածքը վերադարձնելու հրովարտակը։

Իսկ արևմտահայությունը կանգնած էր ֆիզիկական ոչնչացման սպառնալիքի առջև։ Հարազատ ժողովրդի ճակատագրով մտահոգված Հայրապետը կյանքի վերջին տարիներին անդամ չէր դադարում իր պարտքը կատարելուց։ Մահվանից մի քանի ամիս առաջ նրա նախաձեռնությամբ կազմվեց հատուկ պատվիրակություն Հաագայի (Լահեի) միջազգային գագաթաժողովին Հայկական հարցը ներկայացնելու համար[26]։ Նա դիմումներ հղեց ռուսական ցարին[27] և անգլիական թագավորին։

Հայ ժողովրդի համար այդ ծանր պահին, 1907 թ. հոկտեմբերի 29-ին իր մահկանացուն կնքեց Ամենայն հայոց հայրապետը, երբ դեռ իր ժողովրդի «անդեկ և անառաղաստ նավը չէր զտել մի խաղաղ հանգրվան»։ Դարձյալ անդրադառնանք հայ եկեղեցու հմուտ պատմագրին՝ Մաղաքիա Օրմանյանին։ Նշելով, որ կաթողիկոս Խրիմյանը չի փայլել վարչական ունակություններով, «Ազգապատումիս» հեղինակը ցանկանում է պարգել Խրիմյան առեղծվածը. նրա անձի և գործունեության շուրջն ստեղծված հմայքի՝ օրըստօրե և տարեցտարի մեծացումը։ Այդ փաստից նա հանգում է մի շատ կարևոր եզրակացության. «Ինքը գտիչը և ստեղծիչը եղած է ազգասիրական և հայրենասիրական զգացումներուն, որոնցմով ազգը տոգորեցավ 50—60 տարիներե ի վեր..., նոր կյանք ներշնչեց, նոր գործունեություն ազդեց և նոր առավելություն բերավ հայ տարրի վրա»[28]։ Դրվածը բավական էր ապացուցելու, որ հայ ժողովրդի պատմության մի մեծ ժամանակահատված անվանենք Խրիմյանի ժամանակ։ Իր գործունեությամբ և արտահայտած գաղափարներով նա շարունակում է ապրել և պայքարել մեզ հետ։ Խրիմյանը նաև մեր ժամանակակիցն է։

МКРТЫЧ ХРИМЯН (К 90-ЛЕТИЮ СО ДНЯ СМЕРТИ)

Э. А. КОСТАНДЯН

Резюме

Мкртыч Хримян—духовный, культурно-просветительский деятель, имя которого на протяжении полувека было тесно связано с общественной жизнью Западной и Восточной Армении. Он был одним из идеологов национально-освободительного движения западных армян. Еще при жизни М. Хримяна крестьяне Тарона удостоили его высокой чести, назвав его Аврикам (Отцом). Приняв духовный сан архимандрита (1854), он стал основателем первой типографии Западной Армении в монастыре Вараг, где издавался журнал «Арцив Васпуракан» («Орел Васпуракана»). М. Хримян был Константинопольским патриархом, духовным предводителем армян Васпуракана и Тарона, руководителем армянской делегации на Берлинском конгрессе, «зачинщиком и кормчим» Армянского вопроса. В 1892 г. он был избран католикосом всех армян. Все свои усилия он направил на разрешение Армянского вопроса.

---

26 Նույն տեղում, ց. 14, գ. 96։

27 АВПР, Ф. Политархив, д. 3456, նաև Պատմա-բանասիրական հանդես, 1993 № 1—2, էջ 166—168։

28 Մ. Օրմանյան, նշվ. աշխ., էջ 5335։